# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ԲԴԽ-54-Ո-157**
**2018թ.**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՐՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈԳԵԲԱՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 108-րդ հոդվածի 1-ին մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետով և Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի ԲԴԽ-40-Ո-110 որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հետ հարցազրույցի անցկացման համար հոգեբանական հարցեր մշակելու նպատակով ընտրել Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանին:

2. Հանձնարարել Դատական դեպարտամենտին՝ պարզաբանել Երևանի պետական համալսարանի ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ավանեսյանին հոգեբանական հարցերի բովանդակությունը գաղտնի պահելու, դրանց բարեհաջող պատասխանելու հարցում հավակնորդին որևէ այլ ձևով չաջակցելու, հարցազրույցին անձամբ մասնակցելու և մասնագիտական եզրակացություն տալու անհրաժեշտության մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ**
**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ**
**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

**2018թ. դեկտեմբերի 6**
**ք. Երևան**